

11 (166). ԱՌՈՒԾ ՈՒ ՄԱՐԴ

Կէղնի-չէղնի՝ կատու մե կէղնի, գելնա կէրթա մրտ առուծ գանգատ, կանի յառչև, կըսե.

— Բարի լուս, հո՛խպեր։

— Ասու բարին. լե գու ո՞ն իս, զքըզի չըմ ճանչնա, ես՝ յո՞ւր, դու՝ յո՞ւր, ո՞ն կըսե, օր ես կատվի հոխպերն իմ։

Կատուն կըսե.

— Մեր պապերուց մըզի օսյաթ կա օր կատուն առուծի ցեղեն է։

— Աղեկ. ազգական-ազգական,— կըսե առուծ,— ըպա յորի՞ն հմլա մանդրկիկ իս։ Կատվըներ յըմե՞ն քու պես մանդր ին։

— Հա, վոյա, յըմե՞ն։

— Սաբա՞բ։

— Սաբաբն էն է, օր զալըմ մարդու ձեռք ինք յընկի։

— Քելե էրթանք սա՛նք, ո՞րն է էդ մարդ. ըսկի առուծի անուն չը լսե՞ր է, օր զիմ ազգական իդա օրին է հասուցի։

Գընկնան ճամպա։ Կատուն զառուծ կը տանե ուր կեցած տուն, կը մտնան աշխանեն, առուծ հեռստ-հեռստ կը հարցու.

— Է՞յ, մա՛րդ իս, ի՛նչ իս, յորի՞ն հմլա զիմ ազգական առեր իս յոտաց տակ, հմլա մանգրցուցեր իս։ Դու չըս դի՞նա, օր կատուն առուծի ցեղեն է, առուծ լե ջուն ու ջանավարի թագավորն է։

— Թագավոր ապրած կենա,—կըսե աշճին,—խնդիրք կունիմ քըզնե՝ օգնե ընձի զիդա կոճ ճղինք, կերակուլ էփիմ, կի՛, սորա դատաստան էրե։

Առուծ, դու առուծ, զուր թաթեր կը մտու մըջ կոճին, օր ՝ն՝ղե, աշՀին ղՀվին կը քաշե, օր կը քաշե՝ կոճ գիկա ՀիրարՀ, առուծ բանդ Ի՛Ի՛ղնի, կը մնա։ ԱշՀին զկացին կը վերու կանի վըր դլխուն։

Առուծ կատվին կըսե.

— Ազդակա՛ն, մարդ ղընձի քու բարա՞ կը պղտըկցու, թե՞ շատ կը մանդրցու։

Է՛ն գահ կացին կը շրըխկա առուծի ճակտին, գլուխ կը ջնջխի. կը փովի դնտին։ Կատուն կը թողե փախնի, օր հմալ դարր մը լե ուր դլխուն չիգա։